ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 64-Ն

09 նոյեմբերի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքում 2013 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 47-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում՝
«Հեղուկ վառելիքի, տեխնիկկան հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի» բառերը փոխարինել«հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների» բառերով.
2) 5-րդ կետում ավելացնել 3-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.
«3) Խանութներում, կրպակներում, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համարսահմանվում է 30000 (երեսուն հազար) դրամ»:

2. Սույն որոշումը տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած համապատասխան իրավահարաբերությունների վրա:

ՄԱՐԱԼԻԿՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

09 նոյեմբերի 2012 թվական

ք. Մարալիկ